



Priority Pass Քարտի տրամադրման ու սպասարկման կանոններ և սակագներ

1. Priority Pass քարտը հիմնական և կից American Express Gold քարտերի հետ տրամադրվող քարտ է, որը հնարավորություն է տալիս Քարտատերերին օգտվել աշխարհի շուրջ 140 երկրների, 600 քաղաքների ավելի քան 1300 օդանավակայանների սպասարահներից առավել մատչելի սակագներով:
2. Priority Pass քարտը կարող է տրամադրվել 18 տարին լրացած Քարտատերերին:
3. Priority Pass քարտով ցանկացած օդանավակայանի (այդ թվում նաև Չվարթոնց օդանավակայանի) սպասարահի մուտքի արժեքը յուրաքանչյուր անձի համար կազմում է 20 բրիտանական ֆունտ ստերլինգ:
4. Մուտքի գումարը Քարտատերերի և նրանց հյուրերի այցելությունների համար գանձվում է Priority Pass քարտին կցված հիմնական American Express Gold քարտի հաշվի դրական մնացորդից, սպասարահ մուտքի օրվանից մի քանի օրերի ընթացքում:
5. Priority Pass քարտը տրամադրվում է 3 տարի ժամկետով, սակայն ոչ ավել քան հիմնական քարտի գործողության ժամկետն է:
6. Հիմնական American Express Gold քարտի հետ Priority Pass քարտը տրամադրվում է անվճար, իսկ կից քարտերի համար տրամադրման արժեքը կազմում է 5 000 ՀՀ դրամ (քարտի գործողության ժամկետի համար):
7. Priority Pass քարտի գործողության ժամկետի ավարտին քարտը ավտոմատ կերպով վերաթողարկվում է (կից քարտերի դեպքում կրկին գանձվում է 5 000 ՀՀ դրամ քարտի գործողության ժամկետի համար):
8. Priority Pass քարտի կորստի կամ վնասման դեպքում քարտի փոխարինման արժեքը կազմում է 2 000 ՀՀ դրամ:
9. Սպասարահներում տրամադրվող ծառայությունները և մուտքի տևողությունը սահմանվում է տվյալ օդանավակայանի և Priority Pass համակարգի կողմից: Օդանավակայանների սպասարահների կողմից տրամադրվող ծառայություններին կարելի է ծանոթանալ այցելելով Priority Pass համակարգի պաշտոնական կայքէջ՝ www.prioritypass.com:
10. Քարտատիրոջ կողմից ծառայությունից օգտվելու դեպքում, եթե Priority Pass համակարգը չի կարողանում գանձում կատարել քարտին կցված American Express Gold քարտից, ապա Priority Pass քարտը կարող է բլոկավորվել՝ մինչև գանձման համար անհրաժեշտ գումարի ապահովումը քարտին:
11. Priority Pass քարտով կատարված այցելությունների համար չվճարված գումարները հանդիսանում են պարտավորություն և ենթակա են վճարման Քարտատիրոջ կողմից:
12. Քարտատերերը հնարավորություն ունեն օգտվել նաև Priority Pass քարտի էլեկտրոնային տարբերակից բջջային հավելվածի միջոցով, որն ամբողջությամբ փոխարինում է Priority Pass քարտին: Բջջային հավելվածը հասանելի է դառնում քարտը պատվիրելուց հետո:
13. Priority Pass բջջային տարբերակի օգտագործման համար անհրաժեշտ է հեռախոսի մեջ ներբեռնել Priority Pass հավելվածը և մուտքագրել Բանկի կողմից Քարտատերերին տրամադրվող մուտքանունը և գաղտնաբառը: Այնուհետև Քարտատերը կարող է հավելվածի միջոցով մուտք

գործել իր անձնական էջ և այդ էջի «Card» բաժնի QR կոդով մոտենալ ցանկացած սպասարահ և քարտի փոխարեն դա ներկայացնել:

14. Priority Pass բջջային տարբերակի շնորհիվ իր անձնական էջով Քարտատերը կարող է տեսնել իր քարտի տվյալները, կատարած այցելությունները, գանձված գումարները և այլ տեղեկատվություն:
15. Քարտատիրոջ American Express Gold քարտի փակման դեպքում, եթե Քարտատերը ունի գործող այլ American Express Gold քարտ, ապա Priority Pass քարտը կցվում է այդ գործող քարտին, իսկ վերջինիս բացակայության դեպքում Priority Pass քարտը ենթակա է փակման:
16. Քարտատերը կարող է ցանկացած ժամանակ փակել իր Priority Pass քարտը՝ այդ մասին տեղեկացնելով Բանկին: